



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն**

« 11 » « հունիսի » 2025 թվական N° 226-Լ

«ՕՂԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք
ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի
20-րդ ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

1. Հաստատել «Օղի աղտոտվածության նվազեցման կատարողականի հաշվեքննության
արդյունքների վերաբերյալ» Հաշվեքննիչ պալատի կողմից ներկայացված առաջարկությունների
կատարման վերաբերյալ միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

6/11/2025

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2025 թվականի հունիսի 11-ի N 226-Լ հրամանի

ԾՐԱԳԻՐ

«ՕԴԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿՈՂՄԻՅ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ԿԱՏԱՐՈՂ	ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ
1.	<u>Առաջարկություն N1</u> Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի՝ ՀՀ-ում գործող ստանդարտների կազմն ու մակարդակը ներդաշնակեցնել ԱՀԿ-ի ուղեցույցներով առաջարկվող գիտականորեն հիմնավորված կազմին ու	1) «Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշների, աղտոտվածության չափման մեթոդների և ստանդարտացված չափման մեթոդների, ինչպես նաև աղտոտվածության չափման կայանների տեղադիրքերի և քանակների միասնական չափանիշների վերաբերյալ կարգը	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն 3.«Հիդրոօդերևութաբանությա ն և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	2025 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

մակարդակներին՝ անհրաժեշտության Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցներով առաջարկվող միջանկյալ թիրախների հիման վրա սահմանելով անցումային ժամկետներ:	հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մարդու առողջության համար վնասակար հիմնական աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների վերանայում՝ սահմանային և նպատակային արժեքների սահմանում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցներով առաջարկվող անցումային ժամկետներ սահմանելով:	4. Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն	
--	--	--	--

		Մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշներում կներառվեն նաև էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող հիմնական աղտոտիչների համար կրիտիկական մակարդակները: Կվերանայվեն աղտոտվածության չափման մեթոդները՝ մոնիթորինգի չափման պարբերականությունները համապատասխանեցնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող չափման պարբերականությանը: Կետի կատարումը բխում է նաև Վարչապետի 2023 թվականի մարտի 27-ի «Մթնոլորտային օդի	
--	--	---	--

		պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 343-Ա որոշման հավելվածի 9-րդ կետի կատարման անհրաժեշտությունից:		
2.	<u>Առաջարկություն N2</u> Իրականացնել մթնոլորտ արտանետվող փասսակար նյութերի համապարփակ գույքագրում՝ ըստ արտանետման աղբյուրների:	1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում կամրագրվեն լիազորող նորմեր մթնոլորտն աղտոտող շարժական	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն	2026 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ

		և անշարժ աղբյուրներից արտանետումների հաշվարկման մեթոդական ուղեցույցեր հաստատելու վերաբերյալ:		
		2) «Շարժական աղբյուրներից մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրաման: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Մթնոլորտ արտանետումների հաշվարկման համար հաստատված մեթոդական ուղեցույցի մշակում և հաստատում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն 3. Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն	2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ

		անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի կողմից առաջարկվող արտանետումների հաշվարկման համար EMEP/EEA օդի աղտոտիչների արտանետումների գույքագրման ուղեցույցին:		
		3) «Անշարժ աղբյուրներից մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրաման: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Մթնոլորտ արտանետումների հաշվարկման համար հաստատված մեթոդական ուղեցույցի մշակում և հաստատում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին,	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն 3. Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն	2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ

		մասնավորապես՝ ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիայի կողմից առաջարկվող արտանետումների հաշվարկման համար EMEP/EEA օդի աղտոտիչների արտանետումների գույքագրման ուղեցույցին:		
		4) «Կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 23-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Կսահմանվի մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի համապարփակ	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն	2026 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ

		հաշվառման ձևաչափ՝ ինչպես անշարժ, այնպես էլ շարժական ակտիվների համար: Կսահմանվի հստակ ժամկետներ մթնոլորտն աղտոտող ակտիվներից համապարփակ գույքագրման տվյալները վիճակագրական կոմիտե ներկայացնելու համար:		
3.	<u>Առաջարկություն N3</u> Մշակել մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտացանցի արդիականացման ծրագիր՝ վերազինման ենթակա առաջնահերթ դիտակայանների սահմանված ժամանակագրական հաջորդականությամբ:	Կատարված է: Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 611-Լ որոշում: Որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված է մթնոլորտային օդի		

		որակի մոնիթորինգի համակարգի արդիականացումը: Որոշման հավելվածով սահմանված է նաև՝ • օրենսդրական դաշտի վերանայում, • իրազեկման, բացատրական աշխատանքների իրականացում, • Վարչական պատասխանատվության միջոցների վերանայում, • Երևան քաղաքում կանաչապատման և այլ միջոցառումներ:		
--	--	--	--	--

4.	<u>Առաջարկություն N4</u> Սահմանել օդի աղտոտվածությամբ պայմանավորված վաղաժամ մահերի նվազեցման, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ՝ ըստ աղտոտման աղբյուրների արտանետումների նվազեցման թիրախային ցուցանիշներ և դրանց հասնելու վերջնաժամկետներ՝ դրանք ընդգրկելով ծրագրային բյուջետավորման համատեքստում արդյունքային ցուցանիշների կազմում:	1) Ծրագրային բյուջետավորման համատեքստում կսահմանվեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող մարդու առողջության համար վնասակար նյութերի, մասնավորապես կախված մասնիկների (PM 2.5 և PM 10) արդյունքային ցուցանիշները: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի «Մթնոլորտային օդի	1. Ռազմավարական քաղաքականության վարչություն 2. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 3.«Հիդրոօդերևութաբանությա ն և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ	2029 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ
----	--	--	---	---

		պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N611-L որոշման 1-ին կետով սահմանված է «Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի համակարգի արդիականացում և միջազգային չափանիշներին համապատասխանեցում» միջոցառումը, համաձայն որի՝ նախատեսվում է մինչև 2030 թվականը ձեռք բերել մթնոլորտային օդի որակի գնահատման համար անհրաժեշտ, նվազագույն մոնիթորինգային ծածկույթի ապահովման համար միջազգային չափանիշներին համապատասխան, Առողջապահության համաշխարհային		
--	--	---	--	--

	կազմակերպության կողմից հաստատված, մարդու առողջության համար հիմնական վնասակար աղտոտիչների իրական ժամանակին (ներառյալ փոշու մասնիկները՝ PM2.5 և PM10, ազոտի և ծծմբի երկօքսիդները, ածխածնի մոնօքսիդը, գետնամերձ օզոնը) չափման հնարավորությամբ 14 անշարժ և 2 շարժական դիտակայաններ: Նոր դիտակայանների միջոցով իրականացվող մթնոլորտային օդի որակի գնահատման ժամանակ հնարավոր կլինի ունենալ մթնոլորտային օդի աղտոտվածության, մասնավորապես PM 2.5 և PM 10 աղտոտիչներով աղտոտվածության իրական	
--	---	--

		պատկեր, առկա, գնահատելի ելակետային տվյալներ: Տվյալների վերլուծության արդյունքում հնարավոր կլինի հստակ սահմանել գնահատելի արդյունքային ցուցանիշներ և իրականացնել նպատակային քաղաքականություն սահմանված ժամկետում ցանկալի արդյունքային ցուցանիշներին հասնելու համար:		
5.	<u>Առաջարկություն N5</u> Ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների հիման	1) «Շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում:	1. Ռազմավարական քաղաքականության վարչություն 2. Մթնոլորտային քաղաքականության վարչություն	2026 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ

վրա, ըստ անհրաժեշտության՝ միջազգային տեխնիկական աջակցությամբ, մշակել օդի որակի բարելավման ազգային ռազմավարություն և դրանից բխող համալիր միջոցառումների ծրագիր, որը թույլ կտա հասնել վերոնշյալ թիրախներին Ճախսարկյունավետ եղանակով:	<u>Տեղեկանք-պարզաբանում</u> Ռազմավարությունը ներառելու է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները և ռազմավարական ուղղությունները, այդ թվում՝ մթնոլորտային օդի պահպանության ոլորտը: Ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում կներառվի «Միջազգային տեխնիկական աջակցությամբ ազդեցության քանակական գնահատումների և սցենարային վերլուծությունների իրականացում՝ օդի աղտոտվածության և վաղաժամ մահերի ցուցանիշների միջև»՝ կատարող և համակատարողներ նշանակելով նաև առողջապահության նախարարությանն ու այլ		
--	---	--	--

		շահագրգիռ գերատեսչություններին: Կետի կատարումը բխում է նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ա որոշման «Շրջակա միջավայրի պահպանություն» բաժնի 17.1 կետի կատարման պահանջից		
6.	<u>Առաջարկություն N6</u> Մշակել օդի որակի բարելավման մարզային և համայնքային պլանների պահանջներ, այդ թվում՝ դրանց բովանդակության, ազգային պլանի հետ ներդաշնակեցման, կատարման վերաբերյալ հաշվետվողականության:	1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում կամրագրվեն օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույց մշակելու և	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն	2026 թվականի հուլիսի 1-ին տասնօրյակ

		հաստատելու վերաբերյալ լիազորող նորմ, կամրագրվի դրույթ նաև այն մասին, որ տեղական ինքնակառավարման մարմինները մշակում և հաստատում են բնակավայրերում օդի որակի պահպանության պլաններ՝ նախապես համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ:		
		2) «Մթնոլորտային օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցի հաստատելու վերաբերյալ» շրջակա միջավայրի նախարարի հրաման: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Մթնոլորտային օդի որակի պահպանության պլանների մշակման ուղեցույցն ուղենիշ կհամարվի համայնքներում օդի	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն	2026 թվականի հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ

		որակի պահպանության պլաններ կազմելու, պլաններից բխող ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ միջոցառումներ սահմանելու համար: Լիազորության սահմանման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԳՀՄ) սահմանված օրենսդրական մոտարկման պահանջներից, և համահունչ է Եվրոպայի համար մթնոլորտային օդի որակի և ավելի մաքուր օդի մասին Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2008	
--	--	---	--

		թվականի մայիսի 21-ի 2008/50/ԵՀ դիրեկտիվի պահանջին:		
7.	<u>Առաջարկություն N7</u> Ներդնել օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների կոորդինացման (ուղղահայաց և հորիզոնական) իրավական մեխանիզմ:	1) «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգման միջգերատեսչական խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը: <u>Տեղեկանք-պարզաբանում</u> Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հանրային կառավարման տարբեր մարմինների կողմից	1. Մթնոլորտային քաղաքականության վարչություն 2. Իրավաբանական վարչություն	2027 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ

		իրականացվող միջոցառումներն առավել նպատակային, համակարգված, վերահսկելի և կառավարելի կլինեն:		
--	--	---	--	--